ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-22-9/37-2

ք. Երևան 29 .օգոստոս. 2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղար Հ. Բադիկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Թադևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ք. Երևան, Լենինգրադյան 31/7 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ՎՏԲ-Հայաստանբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 16047808168200 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01232586 |
| ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղար | տնօրեն |
| Հ. ԲԱՏԻԿՅԱՆ | Հ. ԹԱԳԵՍՅԱՆ |

*Հավելված N 1*
*N ՊՆՄԱՊՁԲ-22-9/37-2 պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | ՄԳՀ անվանում | Անվանում | Տեխնիկական բնութագրեր | Արտադրողի անվանումը |
|---|---|---|---|---|
| 3 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ | Պատրաստի Կիտ-Տարոցի միջավայր՝ liver broth | չոր փոշի գործարանային փաթեթավորմամբ ֆիրմային անվանումը՝ Liver broth | Biomark |
| 12 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ | բիֆիդում ագար | չոր փոշի գործարանային փաթեթավորմամբ ֆիրմային անվանումը՝ Bifidobacterium Agar | Biomark |
| 14 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ | Եերսինիաների միջավայր (CIN) | չոր փոշի գործարանային փաթեթավորմամբ ֆիրմային անվանումը՝ Yersinia Selective Agar Base | Biomark |
| 21 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Դիագնոստիկում Տուլարեմիայի | բաց կաթնագույն հեղուկ, 1մլ սրվակներով: | Микроген |
| 23 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) | Ձիու շիճուկ | դեղնավուն հեղուկ, 100մլ սրվակ | Микроген |
| 24 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) | Պլազմա ցիտրատային ճագարի չոր | փոշի սրվակում | Микроген |
| 25 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) | ԱԻԲ-եր վիբրիոնների իդենտիֆիկացիայի համար | դիսկեր սրվակում | Микроген |
| 28 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ | Պլոսկիրևի միջավայր | չոր փոշի գործարանային փաթեթավորմամբ | Микроген |
| 29 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ | ֆերմենտատիվ պեպտոն | դեղնավուն փոշի PH 5.8-7 գործարանային փաթեթավորմամբ ֆիրմային անվանումը՝ Peptone bacteriological | Biomark |
| 32 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ | MRS ագար | չոր փոշի գործարանային փաթեթավորմամբ ֆիրմային անվանումը՝ Lactobacillus MRS agar | Biomark |

*Ծանոթություն*

1. Ապրանքները պետք է ունենան.
   1.1 Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO և/կամ GMP և/կամ այլ):
   1.2 Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ դրանք հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:
2. Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի.
   2.1 Խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:
   2.2 Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա ապրանքի մնացորդային պիտանելիության ժամկետի համապատասխանության որոշման անհնարինության դեպքում՝ այդ համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը:
4. Մատակարարման հասցե տեսմանել՝ ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ Կենտրոնական բժշկական բազա (73014 զորամաս):

5. Կնքվելիք պայմանագրով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին համապատասխանող և դրա որևէ բաղադրիչի գծով որակական հատկանիշները գերազանցող ապրանքներ մատակարարելու դեպքում հնարավոր է ապրանքի ընդունումը, եթե առկա է հայտը նախագծող ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր մասնագիտական եզրակացությունը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ |
| ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղար | տնօրեն |
| Հ. ԲԱՏԻԿՅԱՆ | Հ. ԹՈՓՉՅԱՆ |

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | ՄԳՀ անվանում | Անվանում | Չ/Մ | Քանակ | միավորի գինը (ՀՀ դրամ) | գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը 2022թ. 3-րդ եռամսյակ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | Պատրաստի Կիտ-Տարոցի միջավայր՝ liver broth | կգ | 2.0 | 87000 | 174,000 | 2 |
| 12 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | բիֆիդում ագար | կգ | 2.0 | 59800 | 119,600 | 2 |
| 14 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | Ցերսինիաների միջավայր (CIN) | կգ | 1.0 | 54900 | 54,900 | 1 |
| 21 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Դիագնոստիկում Տուլարեմիայի | լրակազմ | 2.0 | 140000 | 280,000 | 2 |
| 23 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) | Ձիու շիճուկ | հատ | 20.0 | 25000 | 500,000 | 20 |
| 24 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) | Պլազմա ցիտրատային ճագարի չոր | հատ | 20.0 | 4500 | 90,000 | 20 |
| 25 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) | ՄԻԲ-եր վիբրիոնների իդենտիֆիկացիայի համար | հատ | 2.0 | 79800 | 159,600 | 2 |
| 28 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | Պլոսկիրևի միջավայր | կգ | 2.0 | 44980 | 89,960 | 2 |
| 29 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | ֆերմենտատիվ պեպտոն | կգ | 2.0 | 50000 | 100,000 | 2 |
| 32 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | MRS ագար | կգ | 3.0 | 53800 | 161,400 | 3 |

*Հավելված N 2*
*N ԳՀԱՊՁԲ-22-9/37-2 պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ըստ եռամսյակների՝ ընդ որում | |
|---|---|---|---|---|
| | | | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 15.12.2022թ. |
| 3 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | 33691411/37 | 174,000 | 174,000 |
| 12 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | 33691411/43 | 119,600 | 119,600 |
| 14 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | 33691411/45 | 54,900 | 54,900 |
| 21 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | 33691420/324 | 280,000 | 280,000 |
| 23 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) | 33691162/56 | 500,000 | 500,000 |
| 24 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) | 33691162/57 | 90,000 | 90,000 |
| 25 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) | 33691162/58 | 159,600 | 159,600 |
| 28 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | 33691411/49 | 89,960 | 89,960 |
| 29 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | 33691411/50 | 100,000 | 100,000 |
| 32 | քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոքր կամ գրանուլներ | 33691411/53 | 161,400 | 161,400 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ գլխավոր թիկունք

Հ. ԲԱՏԻԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԹԱԳ ՀԵՄ» ՍՊԸ
տնօրեն

Հ. ԹԱԳԵՎՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-22-9/37-2 պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________ | հհ ______________ |
| հվհհ ______________ | հվհհ ______________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   » «   » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը` __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «   » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները`

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*N ԳՀԱՊՁԲ-22-9/37-2 պայմանագրի*

ԱԿՏ N _
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________________-ին կնքված N ______________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ____________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ`

______________________ ______________________
ազգանուն, անուն ազգանուն, անուն
______________________ ______________________
Ստորագրություն ստորագրություն